



### 30. ԱՐՁԻ ՔՈԹՈԹԸ

Ըլնում ա, չի ընում մի տերտեր։ Էս տերտերը էնքամ զվաթով  
ա ըլնում, որ ամեն օր գեղի ժամը շալակում ա, տանում մեշեն,  
ընդե աղոթք անում, էլ եդ բերում գեղը։

Մի օր էլ ըսենց ժամը շալակե տարել էր մեշեն<sup>1</sup>, մի Արշի  
քոթոթ ռաստ էկավ. հարցրեց, թե էս ժամը խի<sup>2</sup> ա բերե։

Տերտերն ասեց. — Բերել եմ, միջին աղոթք անեմ։

— Բա՛ս որ բանց ա<sup>3</sup>, — ասեց Արշի քոթոթը, — որ դու էդ-  
քամ զոռով ես, արի իրար հեննա կոխ պրծնենք. ով ում գեննովը  
տա՛ նա նրան ուտի։

Տերտերն ասեց. — Լա՛վ, արի կոխ պրծնենք։

Արշի քոթոթն ու տերտերը կոխ պրծնան։ Արշի քոթոթը վե կա-  
լավ տերտերին գեննովը տվեց. ուզում էր նրան թիքա-թիքա անի՝  
տերտերը աղաշանք-պաղատանք, թե. — Ա'սսու սիրուն, ինձ մի՛  
ուտի. ես քեզ կտանեմ մեր տոմը՝ լավ կպահեմ, մուլաթ կկենամ։

Արշի քոթոթն էլ ուազի էլավ ու տերտերի հեննա էկավ գեղը։  
Արշի քոթոթը տերտերի տանը էլ հաց լթողաց՝ կերավ. խեղճ

<sup>1</sup> Տպագիր տեքստում հաջորդում է՝ Երան, որը չնված է բանահավաքի ձեռ-  
քով (Ս. 4.)։

<sup>2</sup> Տպագիր տեքստում՝ «— թե քաս ըսենց ա...». ուղղումը բանահավա-  
քին է (Ս. 4.)։

տերտերը սրա ձեռիցը լէր իմանում ի՞նչ անի, դվո՞րն էթա, Վերջը  
միտք արեց, որ տանի իրանց թագավորին փեշքաշ անի, բայի նրա  
ձեռիցը պրծնի, թե չէ իրանց տաշտ ու մաղը կկապի, տանը էլ  
զադ չի թողա՛ կուտի, կհատացնի:

Տերտերը ըսենց էլ արեց. վե կալավ Արշի քոթոթը տարավ  
թագավորին փեշքաշ: Թագավորն էլ առավ, հավեսի խաթեր պա-  
հեց: Համա մի քանի օրեն եղը տեհավ, որ՝ չէ՛, էս արշի քոթոթը  
իրա տոմը կբանդի, ինչքամ տալիս են, ասում ա. «Սոված հմա-  
միտք արեց, որ մի գովզ կորցնիլ տա:

Թագավորը իրա նաղիր-վեղրին ասեց, որ մի ջադուբյար պա-  
ռավ կանչիլ տան, բալքի նա՛ սրան մի ճար անի: Դնացին մի պա-  
ռավ կնիկ բերին: Թագավորը հարցրեց, թե էնթավուր տեղ չի՝ գի-  
տա, որ էս Արշի քոթոթին դրկեն, էլ եղ չգտա:

Պառավն ասեց.— Թագավորն ապրած կենա, խի՞ շեմ գիտա-  
օխտը սարի քամակին մի մեշա կա, դրան որ դրկես էն մեշիցը  
ցախ բերի՞ էլ եղ չի գա. ընդե քառասուն աղպեր դևրը<sup>1</sup> դրա մենք  
թիքեն անկաջը կթողան:

— Լա՛վ,— ասեց թագավորը: Կանչիլ տվեց Արշի քոթոթին,  
ասեց.— Պատի էթաս, օխտը սարի քամակին մի մեշա կա, ինձ հմար  
ընդիան հարիր սել ցախ բերես՝ պետքն ա:

— Զո՛վստ աշքիս վրա,— ասեց Արշի քոթոթը,— ինձ հարիր  
սել տո՛ւ, իրա սելվորներովը, ճամփի պաշար՝ նրանից դենը ցախ  
բերիլը իմ շնչին:

Արշի քոթոթը ինչ ուզել էր ճամփի հմար, թագավորը տվեց ու  
ճամփու դրեց: Էս մեր Արշի քոթոթը հարիր սելը աղաքն արած՝  
հաղ ասելոն, քեֆ անելոն էր ճամփա էթում: Գշերը որդե մթնում  
էր՝ վեր էր զալի, կրակ անում, սելերի եզներից մինը մորթում,  
էփում՝ սելվորների հեննա ուտում, սելն էլ մեկել սելերի քամակիցը  
կապում՝ էլի էթում: Ընենց որ ընշանք մեշի դրաղը հասան, Արշի  
քոթոթը հարիր սելի եզներն էլ կերել, հատացրել էր. մնացել էր  
մի հատ, ըստ էլ ըստե մորթեց, կերակուր արեց՝ կերան:

Քառասուն դեր տեհան, որ մեշի դրաղին մի մուխ ա բանձ-  
րանում, մնացին զարմացած, թե էս ո՞վ պատի ըլնի, սիրտ ա արե  
էկե էս դհերանքը, որ զուշն իրա թևովը, օձն իրա պորտովը ընշանք

<sup>1</sup> Տպագիր տեքստում՝ դեր. ուղղումը բանահավաքինն է (Ս. 4.):

Հմի չեն կարացէ ոտ դնի: Դևերի մենծ աղպերը պումուր աղպորը զրկեց, տենա էն ի՞նչ ժուխ ա վեր ըլնում մեշի զրադին:

Պումուր աղպերը գնաց, տեհավլ մի Արջի քոթոթ, հարիր մարդ՝ կրակի շորս բոլորը նստոտել են, կերակուր են ուտում: Հեռվից ձեն տվեց.— Ի՞նչ մարդ եք, որ էս բեվախտին էկել եք մեր մեշի զրադին կրակ արե. ինս եք, ջինս եք, շանավար եք՝ թեզ ձեն հանեք, թե շէ ձեղանից մինն էլ ա սաղ չի պրծնի դև աղպորտանց ձեռիցը:

Արջի քոթոթը դհա կատաղեց.— Դեռ հլա դու մի աղաք արի, տենանք ի՞նչ շանավար ես, որ հեռվից ըտենց մենծ-մենծ փրթում ես, եննա կիմանաս, թե մենք ի՞նչ մարդ ենք:

Դմը մոտկացավ կրակին թե շէ, Արջի քոթոթը ձեռի դագանակովը մի դրբ որ շտվեց՝ էն սհաթին դմը շտեց վեր ընկավ: Արջի քոթոթը տարավ սրան սելիցը պարանով կապեց, որ լըլնի թե փախչի, ինքն էլ եղ էկավ իրա հացը կերավ:

Մենծ դմը տեհավլ, որ պումուր աղպերը եղացավ, չէկավ՝ մեկել աղպորը զրկեց, տենա խի՞ եղացավ:

Արջի քոթոթը սրա զլիսին էլ էն օդիեն հաղաց, տարավ աղպոր կողքին՝ սելիցը կապեց: Մի խոսքով, զլիներդ ինչ ցավացնեմ, ըսենց երեսունը իննը դմին էլ շերկուն իրար կշտի կապուտեց:

Մենծ դմը տեհավլ, որ իրա աղպորտինքը գնացին, էլ եղ չէկան. վերջը ինքը վե կացավ, կատաղած, փրփրած գնաց տենա՝ էս ի՞նչ խարար ա, որ նրանք էսքամ ետաշան:

Գնաց տեհավլ իրա աղպորտինքը՝ երեսունը ինն էլ սելիցը շերկուն կապուտած են. կրակի զրադին մի Արջի քոթոթ, հարիր մարդ նստոտած՝ հաց են ուտում: Հարցրեց.— Ի՞նչ մարդ եք, էս վախտին ըստերանք ի՞նչ եք շինում:

Արջի քոթոթը ձեն, ծպտուն շհանեց, քաշեց դագանակը սրան էլ մեկել աղպորտանց հացին հասցրեց, տարավ նրանց կողքին կապեց:

Առավոտը որ լիսացավ թե շէ, Արջի քոթոթը հրամայեց քառասուն դմին էլ, որ էթան մեշիցը իրանց ձեռովը ցախ կտրեն՝ բերեն սելերը բարձեն: Դևերը վրա պրծան մեշին. մի սհաթումն էնքամ ցախ կտրատեցին, որ հարիր սելը բարձեցին՝ դեռ հլա ավելացավ էլ: Արջի քոթոթը հարիր սելն էլ իրար եննուց կապուտեց, քառասուն դմին աղաքի սելիցը լժեց, ինքն էլ ճիպոտը ձեռն առավ,

նստեց սելը՝ քշեց։ Ըստիան ընշանք թագավորի երկիրը, որ վեց  
ամսեն ճամփա էր, դևերը մի ամսում էկան։

Խաբարը տարան թագավորին, որ Արշի քոթոթը գալիս ա։ Թա-  
գավորը մնաց շվարած, թե էլի պտի դա, իրան դարդավարամ անի։  
Էն սհաթը հրամայեց էն ջադուբյար պառավին քյալա անեն, որ  
սուս գուս էկավ, Արշի քոթոթին էնթավուր տեղ դրկիլ տվեց, որ  
էլ եդ էկավ։

Արշի քոթոթը բերեց սելերը դարդկեց թագավորի ամարաթի  
աղաքին։ Դևերին ըստիան ճամփու դրեց իրանց տեղը. ինքը զնաց  
թագավորին ասեց, որ իրա ուզած հարիր սել ցախը բերել ա։ Թա-  
գավորը երեսհանդ իրան ընենց էր շանց տալի, սաքի թե նրա  
ցախ բերելու վրա ուրախ ա. համա սրտովը, ո՞վ գիտա, ինչթա-  
վուր բաներ ին անցկենում։

Թագավորը կանչիլ ա տալի մի ուրիշ ջադուբյար կնիկ, հարց-  
նում, թե էնթավուր տեղ չի գիտա, որ Արշի քոթոթին դրկեն՝ էլ  
եդ չգա։

Պառավն ասում ա. — Ֆրանգստունի թագավորը մի սիրում աղ-  
ջիկ ունի, նրան քեզ հմար բերիլ տու. ընդե էթացողը ստով-գլխով  
էլ եդ չի գա։

Թագավորը պառավին անկաշ արեց. կանչեց Արշի քոթոթին,  
ասեց, որ պտի էթա Ֆրանգստում, ընդիան թագավորի աղջիկը իրան  
կնիկ բերիլ։

Արշի քոթոթն ասեց. — Լա՛վ, շովստ աշքիս վրա, թագավորն  
ապրած կենա։

Առավոտը որ լիսը բացվեց թե չէ, Արշի քոթոթը ճամփա ըն-  
կավ դպի Ֆրանգստուն։ Գնա՛ց, զնա՛ց, շատն ու քիշը աստոծ գի-  
տա, տեհավ մի մարդ ամեն մի ոտիցը մի եքա շաղացաքար ա-  
կապե ու ընենց ա եգին վազ տալի<sup>1</sup>, որ ալափիստրակը փախչե-  
լիս տեղը՝ եննուցը համում ա, կալնում։ Էս մարդը Արշի քոթոթին  
որ տեհավ, հարցրեց. — Քոթո՛թ աղպեր, էդ ո՞ւր էս էթում։

— էթում եմ Ֆրանգստում. ընդիան թագավորի աղջիկը մեր  
թագավորի հմար կնիկ բերեմ։

<sup>1</sup> Ճպագիր տեքստում՝ «ընենց եզին վազ ա տալի, որ...». բանահավաքը փո-  
խել է դարձել է՝ «ընենց եզին վազում ա, որ...». ժողովրդական ոճը շաղացաղե-  
լու հմար թողնում ենք տեքստում տպագրված ձևը՝ մասնակի ուղղմամբ (Մ. Կ.)։

— Ի՞նչ կըլի, ինձ էլ հետդ<sup>1</sup> տանես:

— Արի՛ էթանք. մին ըլնեմ՝ թող էրկու ըլնենք:

Էրկով գնացին, գնացին՝ տեհան մի մարդ ծովի միշին կան-նել ա. սաղ ծովը փորն ա քաշում՝ դեռ ասում ա. «Ամա՞ն», ևս ծարավ մեռաւ: Էս ծով կու տվողը հարցրեց.— Էդ ո՞ւր եք էթում. ընձ էլ ձեզ<sup>2</sup> ընկեր լե՞ք անի:

— Խի՛ շենք անի. էրկու ըլնենք, թո՞ղ իրեք ըլնենք՝ արի՛ էթանք:

Ըսենց իրեքով ընկեր էլան, գնացին, գնացին, շատն ու քիշը աստոծ գիտա, մի օխտը աշքանի ջաղացի ուսստ էկան: Նեքսև մտան, տեհան մի ջաղացպան ընդե ալիր ա աղում. էլ մա-ջալ չի տալի, որ ալիրը դուս գա, ունցի, հաց թխի, ուտի՛ հենց ընհենց ալիրը հում-հում ա նի տալի, դեռ հլա ասում ա. «Ամա՞ն», մի ճար արեք, սոված մեռաւ:

— Բա՛ր' աշողում, ջաղացպան աղպեր,— ասեցին մեր ճամ-փորդները:

— Բարո՛վ, ասսու բարին. տերն աջողա, գնալներդ ո՞ւր ա:

— Ֆրանգստո՛մ, ընդիան թագավորի աղջիկը բերելու:

— Որ ես էլ գամ ձեր հեննա, լե՞ք տանի:

— Խի՛ շենք տանի, իրեք ըլնենք՝ թո՞ղ շորս ըլնենք. գալիս ես, արի՛:

Զորս ֆոգով իրար հեննա ընկեր էլան՝ գնացին: Գնացին, գնա-ցին, շատն ու քիշը աստոծ գիտա, տեհան մի մարդ անկաջը գեն-նին ա կացըրե՛ լսում ա, հետը խոսում:

— Բարո՛վ, իմաստուն աղպեր,— ասեցին մեր ճամփորդները:

— Բարին ձեր որդիկերանց արեց. աստոծ աջողա, էդ ո՞ւր եք էթում:

— Էթում ենք Ֆրանգստում, թագավորի աղջիկը բերենք:

— Չի՛ լի ես էլ գամ:

— Խի՛ շիլնի. գալիս ես, արի՛. շորս ըլնենք՝ թո՞ղ հինգ ըլ-նենք:

Հնգով խելի տեղ գնացին, գնացին՝ տեհան մի մարդ սազը ձեռին ածում ա. էլ սա՛ր, էլ քո՛ւ, էլ քա՛ր իրանց տեղներիցը ժաժ

<sup>1</sup> Տպագիր տեքստում՝ նեղ նեննա. ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.):

<sup>2</sup> Տպագիր տեքստում հաշորդում է՝ նեննա, որը բանահավաքի ձեռքով ընդլած է (Ս. Կ.):

ին էկե սազի ձենիցը. ընշանք երկնքի դշերն էլ էկել ին անկաչ  
ին անում նրա սազին<sup>1</sup>:

Մեր ճամփորդները ասեցին.— Բա՛ր'աջողում, սազ ածող աղ-  
պեր:

— Բարո՛վ, ասսու հազար բարին, խերին. աստոծ աջողա,  
գնալներդ ո՞ւր ա:

— Ֆրանգստո՛մ, թագավորի աղջիկը բերելու

— Ի՞նչ կըլինի, ընձ էլ ձեր հեննա վե կալնեք:

— Ի՞նչ պտի ըլնի. գալիս ես, արի՛. Հինգ լըլնենք, թո՛ղ վեց  
ըլնենք:

Վեցով գնացին, գնացին՝ տեհան մի մարդ Մասիսը շալակում  
ա տանում Հուսիս, Հուսիսը տանում Մասիս:

Մեր ճամփորդներն ասեցին.— Բա՛ր'աջողում, ղուշադ աղպեր.  
Էդ ի՞նչ ես անում:

— Ըսկի՛, զվաթս եմ փորձում. դուք էդ ո՞ւր եք էթում:

— Էթում ենք Ֆրանգստում:

— Չիլնի՛, որ ընձ էլ ընկեր անեք:

— Գալիս ես, արի՛. վեց լըլնենք՝ թո՛ղ օխտն ըլնենք:

Էս օխտը ֆողին՝ Արշի քոթոթը, Եղին վազողը, Անկշտում շա-  
ղացանը, Սով կով տվողը, Իմաստունը, Սազ ածողը ու Մասիս  
շալակողը էկան, էկան՝ հասան Ֆրանգստում:

Գնացին դուզ թագավորի դուռը ծեծեցին. նոքարը դուս էկավ,  
հարցրեց, թե ո՞ւմն են ուզում:

Արշի քոթոթն ասեց.— Թագավորին:

Նոքարը գնաց թագավորին՝ իմացում տվեց, թե օխտը շեշուտ-  
շեշուտ մարդիկ ուզում են նրան տեհան. թողա՛ գան, թե չէ:

Թագավորն ասեց.— Գալիս են, թո՛ղ գան. տեհանք էդ ի՞նչ  
մարդիկ են:

Թագավորի նոքարը գնաց նրանց կանչեց: Արշի քոթոթը իրա  
ընկերտանցովը էկավ թագավորի աղաքին կաննեց, ասեց.— Թա-  
գավորն ապրած կենա. էկել ենք աղջկանդ տանենք. տալիս ես՝ քու  
խոշովը տո՛ւ. թե չէ, որ բանը մեզ մնա, իմաց կաց զոռով էլ կտա-  
նենք:

<sup>1</sup> Տպագիր՝ տեքստում՝ «... իրանց տեղներիցը ժաժ ին գալի սազի ձենիցը. ընշանք երկնքի դշերն էլ ին գալիս անկաչ անում նրա սազին». ուղղումները բա-  
նահավաքինն են (Ծ. Կ.).

Թագավորն ասեց.— Տալը կտամ, համա իրեք բան կասեմ. թէ  
արեցիք, ոո աղջիկս ձերն ա ու ձերը, թէ չէ՝ ձեր քոմմը դուկն  
էլ թոցնիլ կտամ. դուք գիտաք:

Արջի քոթոթն ասեց.— Ղարուլ ենք, թագավորն ապրած կե-  
նա, կանենք. թէ չկարացինք, մեր արինը քեզ հալալ ա՝ ինչ ուզում  
ես, ա'րա:

Թագավորը սաղ իրա երկրումը շառ գոռալ տվեց, որ տունը  
մի մենծ բղուղ լիքը կերակուր բերի իրա զոնաղների հմար. Ընենց  
էլ հացը՝ իրա երկրի ամեն փոնչքանցը թամրահ արեց, որ սաղ օրը  
հա' հաց թխեն, իրաք եննուց հասցնեն, բալրի նրանք դեմ առնեն,  
չկարենան ուտի:

Ոնց որ թագավորը թամրահ էր արե, տունը մի բղուղ կերա-  
կուր բերեց. ընենց որ հազար մարդ ուտեր՝ կկշտանար, դեռ հա  
կավելնար էլ: Համա էս մեր զոնաղները օխտը ֆոգով ընենց կե-  
րան՝ ամանները թամզացրին, որ թագավորը մնաց զարմացած.  
միտք արեց, որ էս չէլավ, պտի ուրիշ բան միտք անվի. թէ իրա  
աղջիկը էս արենխում շանավարների ձեռը կդցի՝ ֆողեց ֆողի  
կկորցնի:

Արջի քոթոթին կանչեց, ասեց.— Ինձանից ես մի մարդ կղըր-  
կեմ օխտը սարի քամակը, ընդի մի Անմահական աղքուր կա, էն  
աղբրիցը ջուր բերի. դու էլ քու մարդկերանցից զրկի. ո'ւմ մարդը  
թեզ գա, իմաց կաց՝ նա տարել ա:

Արջի քոթոթը ուազի էլավ. կանչեց էն Եղին վագ տվողին,  
ասեց, որ պտի էթա օխտը սարի քամակիցը Անմահական ջուր  
բերի:

Եղին վազողն ասեց.— Աշքիս վրա, Քոթոթ աղպեր. դրանից էլ  
հեշտ բա՞ն կա աշխարքումը:

Համա ըս էլ պտի ասեմ, որ թագավորը սրանից մի շաբաթ  
աղաք հրեղեն ձիավոր մարդ էր զրկե Անմահական զրի, որ նրա-  
նից թեզ գա. լունքի էդ ճամփեն շատ հետու էր՝ էրկու, իրեք շար-  
թումը լավ քյահան ձին անջախ էթար, գար:

Համա Եղին վազողը ընենց գնաց, որ թագավորի զրկած ձիա-  
վորին ճամփին ուստ էկավ, նրանից անց էլ կացավ, գնաց Ան-  
մահական աղբրիցը ջուր լցրեց, եդ էկավ՝ դեռ նա նո՞ր էր հասե  
աղբուրը: Տարավ Անմահական ջուրը թագավորին տվեց:

Թագավորն ասեց.— Աղպե՛ր, էս հետ էլ ախտեցիք. մնաց մի

բան, թե ըս էլ արիք՝ հո՛ աղջիկս ձերն ա, տարե՛ք, ձեզ հալալ ըլ-նի:— Իմ համամը տաքացնիլ եմ տվե. գնացե՛ք թամուզ լեղացեք, ընդիան էկեք հաց կերեք, հացից եղը աղջիկս վե կալեք՝ տարեք, ոտով-գլխով ձեզ եմ տալի:

Արշի քոթոթը իրա ընկերուանցով գնաց թագավորի համամը, թագավորը աղաքուց թամբահ էր արե իրա նոքարներին, որ հա-մամը էնքամ տաքացնեն, որ նրանք մննելու բաշտան՝ տեղն ու տեղը խաշվեն մնան: Արշի քոթոթը գնաց համամ. տեհավ էնքամ տաքացրել են, որ պատերն էլ ա կարմրե, հեռվից նրա գուը մարդի էրում ա թողում. Սով կուլ տվողը որ մին չփշեց՝ համամի պատերը, ջուրը ընենց սառնացան, հենց իմանաս ըսկի տաքացրած շըլներ: Թոմմը-քով էլ մտան հավուզը, շին-շին լեղացան, դուրս էկան գնացին թագավորի կուշտը, որ հաց ուտեն՝ եննա նրա աղջկանը վեր ունեն, տանեն:

Թագավորը տեհավ, որ ոնչ մի բանով էլա շկարաց Արշի քո-թոթին զոռի, իրա նոքարներին հրամայեց, որ նրանց աղաքը կե-րակուր բերելիս՝ ամանների մեջը դեղ քցեն, որ նրանք ուտեն թե չէ, տեղն ու տեղը չորանան. բալքի սրանով պրծնի էս մարդակեր շանավարների ձեռիցը:

Որ հացի նստեցին, նրանց իմաստուն ընկերը անկաջը գեննին դրեց՝ ալրիալը հասկացավ, որ իրանց ամանները դեղել են: Ընկոր-տանց անկաշին փսփսաց, թե իրանց աղաքի կերակրների մեջը դեղ ա քցած, չուտեն:

Սաղ ածող ընկերը էս որ իմացավ՝ իրա սաղն ածեց. թագա-վորը, նրա կնիկը, աղջիկը, նոքարները՝ բիրադնով էլ սաղի ձենիցը խելքամաղ էլան, մնացին: Ընչանք նրանց աղաքի ասաններն էլ սաղի ձենը որ լսեցին, իրանց տեղներիցը ժաժ էկան՝ դեղած ամա-նիքը գնացին թագավորի ու նրա տանըցոնց աղաքը, նրանց ամա-նիքը էկան սրանց աղաքը: Սազ ածողը սազը ձեռիցը վե դրեց, որ նրանք կարացին հաց ուտի: Թագավորը իրա ամանիցը որ մի գուլ շկերավ՝ էն սհաթը միջից տրաքեց, շաթմիշ էլավ, Կնիկը էս որ տեհավ՝ վախլությունիցը նա էլ տեղն ու տեղը ընդի մեռավ<sup>1</sup>:

<sup>1</sup> Տպագիր տեքստում՝ ոչս որ տեհավ թե չէ, երա կեիկը վախլությունից նա էլ տեղն ու տեղը ընդի մեռավ. ուղղումները բանահավաքինն են (Ս. 4.).

Սրանից եղը, հա՛լրաթ Արշի քոթոթի ձեռը էլ ո՛վ կարար բռնի.  
թագավորի աղջիկը նրանն էր ու նրանը. ուղենար վե կռմեր, կտա-  
ներ իրանց թագավորին: Համա մըկ էլ միտք արեց, թե խի՞ տանի  
նրան. հաղիր իրան կնիկ կշինի:

Իրա ընկերտանցով թագավորի զոշնի հեննաա կոիվ արեց՝ ախ-  
տեց. ինքն էլ նստեց ընդե թագավոր: Թագավորի աղջիկն էլ իրան  
կնիկ առավ՝ օխտն օր, օխտը գշեր հարսանիք արեց:

Ասսանից իրեք խնձոր վեր ընկավ. մինն՝ ասողին, մինն՝ ասիւ  
տվողին, մինն էլ՝ անկազ դնողին:

